ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Գյումրի, Շչեդրինի 7
Հեռ 0312 3-10-72
Ե/թ Հ -4

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցներին

# ՀՐԱՎԵՐ

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու N30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք (ներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում ***«Գ-30ՀԴ ՇՀԱՊՁԲ-11/2-01»***

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի Շչեդրինի փողոց 7 հասցեով, ***մինչև 2015.թ հունվարի 29-ի, ժամը 15-00-ը:***

***Հայտերը կբացվեն*** ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու N30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ շենքում, Շչեդրինի 7 հասցեով, ***2015թ.հունվարի 29-ին ժամը 15-00 -ին:***

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու N30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար «սննդի ծանրոցներ»-ի մատակարարման տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մանագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով, որը հրապարակված է www.gnumner.am կայքում՝ «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

1. ***գնման ընթացակարգին մասնակցելու դիմում***, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

2. ***գնային առաջարկ***,, որը Մասնակցի կողմից ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով :

Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին » ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիմքով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ Շիրակի մարզի« Գյումրու N30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ էլեկտրոնային փոստի հասցեն է՝
***gyumri30@schools.am,***

Հարգանքով՝ Կ.Ստեփանյան

« 16 » հունվարի 2015 թ

ՆԱԽԱԳԻԾ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ
# N Գ-30ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01

ք.Գյումրի "___" ________ 2015թ.

ՀՀ Շիրակի մարզի « Գյումրու № 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի Կ.Ստեփանյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև` Գնորդ), մի կողմից և «______________» -ն, ի դեմս տնօրեն ________յանի,որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև` Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

## 1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները (այսուհետև` Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված 3):

## 2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և առաջին մատակարարման համար ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1. Գնորդն իրավունք ունի`**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատճաշ որակի` սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը` իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե գնորդը վաճառողի կողմից պարտականությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք` սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն` Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանք այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատա:կարարվել է անպատճաշ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է`**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետներում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինի վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմահագրի ընդհանուր գինը կազմում է՝ ______________ (______________) ՀՀ դրամ: Միավոր գինը սահմանված է սույն Պայմանագրի N1 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 9.1 կետով նախատեսված համաձայնագրով սահմանված ամիսներին::

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 4) և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված ՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդին համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ Կողմերի միջև համաձայնագրի կնքման հիման վրա: Սույն մասի համաձայն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում Ապրանքների մատակարարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանարի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

- սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները խնայողություններ և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կնքած այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ՝ | ՎԱՃԱՌՈՂ՝ |
| --- | --- |
| ՀՀ Շիրակի մարզի« Գյումրու N30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | |
| Հասցեն՝ ք.Գյումրի Շչեդրինի 7 | |
| Բանկը՝ <<Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ>> ՓԲԸ Գյումրու մ/ճ | |
| Հ/Հ 2380018102880100 | |
| ՀՎՀՀ 05510758 | |
| ------------------------------- | ------------------------------- |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
N Գ-ՅՕՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով
պայմանագրի

# Տեխնիկական բնութագիր

## 1.Գնման առարկայի բնութագիրը

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|---|
| 1 | Սննդի ծանրոց | Հատ | Տարբեր տեսակի սննդամթերք և սննդամթերքի օգտագործման հետ կապված պարագաներ պարունակող փաթեթ: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |

## 2. Սննդի ծանրոցների բաղադրամասերը և նրանց տեխնիկական բնութագրերը

| | Սննդի ծանրոցի բաղադրամասեր | Չափման միավոր | Տեխնիկական բնութագրեր |
|---|---|---|---|
| 1 | Բուտերբրոդի հաց | գրամ | Պատրաստված բարձր տեսակի ալյուրից, թարմ ,փաթեթավորված կամ առանց փաթեթավորման: Տեղական արտադրության: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ |
| 2 | Յոգուրտ | գրամ | Յոգուրտ, պատրաստված կաթնամթերքից, մրգային, առանց կոնսերվանտների, փաթեթավորված մինչև 150գ տարողությամբ սպառողական տարաներով, յուղայնությունը 0.1-4.5 % ՀՍՏ 245-2005: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշման: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % : |
| 3 | Վաֆլի | գրամ | Առանց միջուկի, չափածրարված տուփերով կամ կշռով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % |
| 4 | Բուլկի | գրամ | Պատրաստված բարձր տեսակի ալյուրից, թարմ և փափուկ, թողարկված կշռով և հատով,փաթեթավորված կամ առանց փաթեթավորման, ՀՍՏ 44-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Տեղական արտադրության: |
| 5 | Հյութ | միլիլիտր | Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված "Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի", "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |
| 6 | Սուֆլե | գրամ | Տեղական արտադրության կոնֆետ շոկոլադապատ մրգային, դոնդողային, դոնդողամրգային հավելանյութերով: ԳՕՍՏ-4570-93, Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |
| 7 | Կոնֆետ | գրամ | Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Տեղական արտադրության |

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Քաղցրաբլիթ | գրամ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%, ԳՕՍՏ 14033-96: Անվտանգությունը բստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 9 | Թռչնի կաթ | գրամ | Ըստ ԳՕՍՏ-ի, Անվտանգությունը` բստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Տեղական արտադրության: |
| 10 | Պանրիկ | գրամ | Պատրաստված թարմ կովի կաթից, անվտանգությունը և մակնշումը` բստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Տեղական արտադրության: |
| 11 | Անձեռոցիկ | հատ | Անձեռոցիկ սեղանի,տեղական արտադրության,թղթի 1մ$^2$ մակերեսի զանգվածը 20գ,խոնավությունը 7%, փափուկ թղթից: Մակնշումը և փաթեթավորումը ` բստ ՀՀ Կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված <<Կենցաղային և սանհիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>>: |
| 12 | Գդալ | հատ | Պլաստմասե, նախատեսված սննդի համար,միկանգամյա օգտագործման համար: <<Կենցաղային և սանհիգիենիկ նշանակության ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի |
| 13 | Պանիր, լոռի | գրամ | Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը` բստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:Տեղական |
| 14 | Երշիկ | գրամ | Երշիկ եփած` պատրաստված տավարի եւ խոզի մսերից, բստ ԳՕՍՏ 23670-79 կամ արտադրողի տեխնիկական պայմանների. խոնավությունը ոչ ավելի քան 68%, փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Անվտանգությունը` և մակնշումը բստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի եւ մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" եւ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի |
| 15 | Թթվասեր, տեղական | միլիլիտր | Թարմ կովի կաթից, յուղայնությունը` 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը` 65-100 0T, անվտանգությունը և մակնշումը` բստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % |
| 16 | Թխվածքաբլիթ | գրամ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%, ԳՕՍՏ 14033-96: Անվտանգությունը բստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 17 | Պեչենի | գրամ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%, ԳՕՍՏ 14033-96: Անվտանգությունը բստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 18 | Շոկոլադապատ թխվածքաբլիթ | գրամ | Թխվածքաբլիթ կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%,պատված շոկոլադի 1-2 մմ հաստություն ունեցող շերտով: Անվտանգությունը բստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |

3. Սննդի ծանրոցները պետք է փաթեթավորվեն և մատակարարվեն ըստ վերևում սահմանված տեխնիկական բնութագրում ընդգրկված սննդամթերքի և սննդի օգտագործման հետ կապված պարագաների հետևյալ պարունակությամբ.

| Ծանրոցի բաղադրիչներ | Միավորի զանգված,ծավալ | Քանակ |
|---|---|---|
| Տարբերակ 1 | | |
| Բուտերբրոդ պանրով | 80-100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Բուլկի | 60-80գ | 1 |
| Թթվասեր | 100գ | 1 |
| Վաֆլի | 9-12գ | 5 |
| Սուֆլե | 9-12գ | 2 |
| Կոնֆետ | 4-6գ | 6 |
| Պեչենի | 6-8գ | 4 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| Տարբերակ 2 | | |
| Բուտերբրոդ երշիկով | 80-100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Թթվասեր | 100գ | 1 |
| Պեչենի | 6-8գ | 4 |
| Քաղցրաբլիթ | 9-12գ | 3 |
| Թռչնի կաթ | 18-22գ | 4 |
| Պանրիկ | 40գ | 1 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| Տարբերակ 3 | | |
| Բուտերբրոդ պանրով | 80-100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Քաղցրաբլիթ | 9-12գ | 2 |
| Կոնֆետ | 4-6գ | 3 |
| Յոգուրտ | 100գ | 1 |
| Թռչնի կաթ | 18-22գ | 2 |
| Պանրիկ | 40գ | 1 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| Տարբերակ 4 | | |
| Բուտերբրոդ երշիկով | 80-100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Թթվասեր | 100գ | 1 |
| Շոկոլադապատ թխվածքաբլիթ | 14-16գ | 4 |
| Սուֆլե | 9-12գ | 4 |
| Կոնֆետ | 4-6գ | 6 |
| Վաֆլի | 9-12գ | 5 |
| Բուլկի | 60-80գ | 1 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |

| Տարբերակ 5 | | |
|---|---|---|
| Բուտերբրոդ պանրով | 80-100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Քաղցրաբլիթ | 9-12գ | 4 |
| Կոնֆետ | 4-6գ | 5 |
| Յոգուրտ | 100գ | 1 |
| Շոկոլադապատ թխվածքաբլիթ | 14-16գ | 2 |
| Թռչնի կաթ | 18-22գ | 3 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |

ԳՆՈՐԴ՝ ____________________ ՎԱՃԱՌՈՂ՝ ____________________

<u>*Հավելված 2*</u>
«.....» ...................... 20....թ.
կնքված
N ......................
պայմանագրի

# Գնման ժամանակացույց

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Հունվար | | Փետրվար | | մարտ | | Ապրիլ | | Մայիս | | Սեպտեմբեր | | հոկտեմբր | | Նոյեմբեր | | Դեկտեմբեր | | Ընդամենը տարի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քան. | գումար | քան. | գումար | քան | գումար | քան. | գումար | քան. | գումար | քան. | գումար | քան | գումար | քան. | գումար | քան. | գումար | քան. | գումար |
| 1 | 2 | 3 | 4 | | | | | | 4 | | | | | | 4 | | | | | | 12 | 13 |
| 1 | Սննդի ծանրոցներ | հատ | | | 380 | | 323 | | 399 | | 361 | | 399 | | 323 | | 399 | | 380 | | 2964 | |

*<u>Հավելված 3</u>*

«____» _______________ 2____թ. կնքված
N ____________ պայմանագրի

Վճարման ժամանակացույց

| Ապրանքի անվանումը | Ֆինանսավորման ժամկետը |
|---|---|
| | Ֆինանսավորումը կատարվելու է 2015 թվականի նախահաշվով նախատեսված գումարների սահմաններում , երկկողմ հանձնման – ընդունման արձանագրության հիմնն վրա |
| | Ընդամենը տարի |
| Սննդի ծանրոցներ | 100% |

*Ծանոթություն*՝ Գնման ընթացակարգը կազմակերպվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

Հավելված 4
"___" դեկտեմբերի 2014թ. կնքված
N Գ-ՑՕՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 պայմանագրի

| Գնորդ | Վաճառող |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հասցե______________________ | հասցե______________________ |
| հհ______________________ | հհ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ______________________ | հվհհ______________________ |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «_________» 2015թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____________________ »

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__ » «_____________» 2015թ.

Պայմանագրի համարը՝ ___________

Պատվիրատուն, ի դեմս_______________________________________ և Կատարողն՝ ի դեմս_______________________________________, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագիրը և գնման ժամանակացույցը՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «__» «_________» 2015թ-ից «__» «_________» 2015թ. Ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

| Մատակարարված ապրանքի համառոտ նկարագիրը | Մատակարարված ապրանքի քանակական ցուցանիշները | Ապրանքի մատակարարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------ | ------------ | | ---------- |

Վերոհիշյալ ապրանքի մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| ազգանուն______________ | ազգանուն______________ |
| Կ.Տ | Կ.Տ |

Օրինակելի ձև

Հավելված 5
"ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2" ծածկագրով
ընթացակարգի հրավերի

Գ-30ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

________________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու № 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ի կողմից Գ-30ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով հայտարարված ընթացակարգին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

________________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի Կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

________________________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

________________________________-ն էլեկտրոնային փոստի հասցեն է՝ ___________
Ընթացակարգի մասնակցի անվանումը

________________________________ ______________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________________2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

<u>Օրինակելի ձև</u>

Հավելված 5.1
"ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2" ծածկագրով
ընթացակարգի հրավերի

Գ-ՅՕՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված Գ-ՅՕՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
______________________________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը
հետևյալ գնով՝

(ՀՀ դրամ)

| Գնման առարկայի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4=2+3* |
| Սննդի ծանրոց | | | |

* 2-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 3-րդ սյունակում:

______________________________________________ ______________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________2015թ.